

ՆԱԽԱԳԱՆ ԱՍԱՏ. «ԵՐԲ ԱՉԳՄՅԻՆ ՇԱՀԵՐՈՒԴԵՒ ՍԿԵԲՈՒՆԵՐՆԵՐՈՒ ԿԱՌՉԱԾ ԿԸ ՄՆԱՍ, ՀԱԽԱԳԱՐ ՄՕՏԻԿ ԱՊԱԳՄՅԻՆ ՏՈՒԾԵՍ, ՍԱԿԱՅՆ ՀԵՏԱԳՄՅԻՆ, ՊԱՅՔԱՐԻՎ ՄԷՋ, ԱՉԳՄՅԻՆ ՄԻԱՍՆՈՒԹԻՒՆ ԿՊԱՂԱՂՎԵՍ»

Դամասկոսի մեջ Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ հարցազրոյց մը ունեցաւ ռուս թղթակից Վլատիմիր Սոլովիովի հետ: Վերջինս Նախագահին տասը հարցում ուղղեց: Հարցազրոյցին սկիզբը, ռուս թղթակիցը ըսաւ. «Հպարտութիւն կը զգամ մայրաքաղաք Դամասկոսի մեջ գտնուելուս համար, Սուրիոյ պէս հզօր երկրի մը, որ պայքարելով բնորոշեց իր ճակատագիրը»:

Ստորեւ կը ներկայացնենք Նախագահ Ասատին պատասխաններէն քաղուած միտքեր:

«Երբ ազգային շահերուդ եւ սկզբունքներուդ կառչած կը մնաս, հաւանաբար կեցունածքիդ տուրքը բարձր կը վճարես, հաւանաբար մօտիկ ապագային կը տուծես այլ, սակայն հետագային, պայքարիդ մեջ, ազգային միասնութիւն կ'ապահովես: Պայմանները կրնան փոխուիլ եւ ժողովուրդիդ միասնականութեամբ, հայրենիքիդ կառչած կ'իրականացնես ճշգտումներդ, կը զարգացնես երկիրդ»:



Նախագահ Ասատ շեշտեց, որ արեւմուտքի քաղաքական համակարգը առուծախի համակարգ է, ոչ թէ միացեալ շահերու համակարգ, յայտնելով, որ այլ երկիրներու դէմ արեւմուտքին ի գործ դրած տնտեսական շրջափակումը, պատիժները կը նուազեցնեն ԱՄՆ տոլարին արժեքը, իսկ երկար ժամանակի վրայ՝ կ'երաշխաւորեն մեր շահերը:

Նախագահ Ասատ յայտնեց, որ Ռուսիա այն պետութիւնն է, որում կերկայիս ողջ աշխարհի ճակատագիրը կը սահմանուի: Նախագահ Փութինին գոյացուցած որոշումներով՝ միջազգային հաւասարակշռութիւնը կը վերականգնի:

Պաղեստինեան իրավիճակին անդրադառնալով, Նախագահը ըսաւ. «Եթէ խօսիլը Կազգայի իրավիճակին մասին, պէտք է լաւ իմանանք, որ պայքարող պաղեստինցիներ օրինակաւոր են չի ներկայացնող երկրի մը՝ որ կը պատերազմի այլ երկրի մը դէմ, ոչ այլ օտար ժողովուրդի մը՝ որ կը ձգտի այլ ժողովուրդի մը երկիրը, կամ յարակից երկրի մը տարածքը բռնագրաւել: Ընդհանրապէս. պաղեստինցիները հողին տէրն են, ի՞նչ հողերը բռնագրաւած են, ի՞նչ դէմ ոճիրներ կ'իրագործուին շուրջ 80 տարիէ ի վեր: Ուստի կարելի չէ ներկայ իրավիճակին մասին խօսիլ առանց ընդհանուր պատկերը ներկայացնելու: Կարելի չէ Կազգայի մասին խօսիլ առանձնապէս, որովհետեւ ան պաղեստինեան հարցէն մաս մըն է: Պաղեստինեան հարցին մեջ «Իսրայել» բռնատեր է, յարձակող է: Ան պաղեստինցիներ կը սպաննէ պարզապէս այն պատճառով, որ անոնք ինքնապաշտպանութեան կը դիմեն: «Իսրայել» տարիներէ ի վեր պաղեստինցիներուն դէմ զենքի ուժ կիրառելուն նուազագոյն արդարացումն իսկ չունի, ի տարբերութիւն պաղեստինեան պարագային, որ ինքնապաշտպանութեան պարագայ է: Պաղեստինցիները ինքզինքն չեն պաշտպանէ, հետեւաբար ալ ունի՞ զենքի ուժ օգտագործելու իրաւունք. որպէսզի պաշտպանէ իր զարկներուն կեանքը, հակառակ անոր, որ պետութիւն չի ներկայացնող, այլ՝ մարտնչող քաղաքայիններու խումբ մը, որ զենքի ուժ ձեռք բերած է Ազգային Դիմադրութեան միասնալով: Խումբ մը, որ ոչ պետութիւն ունի, ոչ բանակ: Հետեւաբար կարելի չէ համեմատել իսրայելեան եւ պաղեստինեան կողմերը ներկայ պայմաններուն մեջ»:

Նախագահ Ասատ պատասխանելով այն հարցումին, թէ եթէ պատժամիջոցը անձի մը, Նախագահի մը դէմ կիրարկուած ըլլայ (այս պարագային՝ Ռուսիոյ Նախագահին), ինչ կ'ըլլայ անոր իմաստը՝ ըսաւ. «Իրականութեան մեջ նման որոշումներ շատ մեծ նշանակութիւն չունին, հաւանաբար արեւմուտքի ժողովուրդին համար միայն «նշանակութիւն» կրնան ունենալ: Արեւմուտքը պատմութեան ընթացքին հաւատարմացած է, թէ կեանքը պէտք է սկսի արեւմուտքէն, այսինքն արեւմուտքը թթուածինը կը մարմնաւորէ: Եթէ արեւմուտքը որոշէ քեզ որեւէ բանէ գրկել, ուրեմն իր տրամաբանութեամբ դուն ապրելու արժանի չես, պիտի վերանսաս եւ աշխարհէն չբանաս: Այսպէս կը տրամաբանաբար արեւմուտքը: Ան տակաւին չի գիտակցիր որ աշխարհը փոխուած է, եւ երբ նման որոշումներ կ'առնէ, առաջին թիրախը կ'ըլլայ արեւմուտքի քաղաքացին, որ վստահաբար տեղեակ ալ չէ աշխարհի ներկայ իրավիճակէն: Արեւմուտքը կը կարծէ, որ Նախագահ Փութին պատիժի այս որոշումէն ետք տագնապի պիտի մատուցի: Դժբախտաբար այս է արեւմուտքի տրամաբանութիւնը: Հոս անշուշտ նկատի ունիմ արեւմուտքի քաղաքական գործիչները, ոչ թէ ժողովուրդը ինքնին»:

ՔԱՆԱՍԻ. «ԻՐԱՆ ԴԵՄ ԵՍԱՐՍԺԱՆՐԶԱՆԻ ՄԻՋԱԳՄՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒ ՈՐԵՒԷ ՓՈՓՈԽՈՒԹԵԱՆ»

Իրանի Արտաքին գործոց Նախարարութեան մամլոյ խօսակց Նասեր Զանսաանի վերահաստատած է իրանական կողմին այն դիրքորոշումը, որ իրենց համար անընդունելի է աշխարհաքաղաքական որեւէ փոփոխութիւն, որ կը յանգեցնէ տարածաշրջանի միջազգային սահմաններու փոփոխութեան:

«Արմենիա»-ի հաղորդումով՝ այս մասին կը յայտնէ ISNA գործակալութիւնը՝ մեջբերելով խօսակցին պատասխանը մամլոյ ասուլիսի ընթացքին հնչած այսպէս կոչուած «Չանգեզուրի միջանցք»-ին առնչուող հարցումին:


«Իրանի դիրքորոշումը այս հարցին վերաբերեալ բազմիցս յայտարարուած է: Այդ դիրքորոշման մեջ փոփոխութիւն չէ եղած ու պիտի չըլլայ», յայտնած է Զանսաան:



ԱՏՐԴԵՅՃԱՆՅԻՆԵՐ ԿԸ ՔԱՆԴԵՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՄԵՋ ԳՏՆՈՒՈՂ ԱՐՅԱՍԻ ԱՉԳՄՅԻՆ ԺՈՂՈՎԻՆ ՇԵՆՔԸ

«Թերթ» կը յայտնէ, որ բռնագրաւուած Ստեփանակերտի մեջ Ատրպեյճանի իշխանութիւններու իրահանգով օրերս կը քանդուի Վերածնունդի իրապարակին վրայ գտնուող Արցախի խորհրդարանին շէնքը:

Այս շէնքին մեջ կը գործէին Արցախի Ազգային Ժողովի պատգամաւորները մինչեւ Սեպտեմբեր 2023:



Շէնքի քանդումի աշխատանքներուն մասին վկայող պատկերները, ինչպէս նաեւ տեսանկյունը, տարածուած են համացանցի մեջ:

Օրեր առաջ ալ Արցախի մշակութային ժառանգութեան մշտադիտարկումով զբաղող «Մոնիումընթուր» անկախ խումբը յայտարարեց, որ Ատրպեյճանցիները Ստեփանակերտի մեջ քանդած են աշխարհահռչակ ֆրանսահայ երգիչ Շարլ Ազնաւուրի յուշարձանը:

Փորձագետները բազմիցս ահագանցած են Ատրպեյճանի կողմէ Արցախի մեջ հայկական հետքը վերացնելու մասին: Արցախի մեջ եկեղեցիներուն վրայէն նաեւ խաչերը կը հեռացուին, պատմական կոթողներ կը վերացուին:

Տարբեր հաշուարկներով՝ Ատրպեյճանի վերահսկողութեան տակ է 4000-էն 6000 յուշարձան, որոնց շարքին՝ եկեղեցիներ, խաչքարեր, ամրոցներ:

Տեղական Լրագրող

Խմբագրական

ՍՈՒՐԻԱՆԱՅ ԿԻՆԸ՝ ԳՈՐԾՈՒՆ ՏԱՐԻ (Կնոջ Միջազգային Օրուան Առիթով)

Սուրիահայ կինը գաղութի կազմաւորման առաջին օրերէն իր բարեխառն ներդրումը ունեցած էր համայնքի մշակութային, բարեսիրական, կազմակերպչական, կրթական տարբեր ոլորտներուն մէջ: Պահպանելով իր անհատական դերը որպէս մայր եւ կողակից, որպէս դաստիարակ եւ ուսուցիչ, ան լծուած էր նաեւ սեփական աշխատանքի ու փորձած միջինարեւելեան աշխարհին մէջ իր տեղը գտնել որպէս ստեղծագործ ու ժրջան քաղաքացի, որպէս բժիշկ ու դասախօս, թէեւ աշխատանքի դաշտը այդ օրերուն եղած էր սահմանափակ:

Հետագային անոր դերը աստիճանաբար ծաւալեցաւ: Սուրիահայ կինը մուտք գործեց նաեւ քաղաքական դաշտ՝ որպէս նախարար, երեսփոխան, տեղական ինքնակառավարման մարմնի անդամ եւ այլն:

Սուրիոյ պատերազմն ու յատկապէս արական սեռի ներկայացուցիչներուն գաղթը վերջին տասներեք տարիներուն ստեղծեցին այնպիսի պայմաններ, որոնց լոյսին տակ սուրիացի կնոջ դիմաց աշխատանքի շատ անելի լայն հորիզոններ բացուեցան: Այսօր շարք մը ոլորտներու մէջ նկատելի է իգական սեռի աշխատանքին նկատառելի աճը: Խաստատութիւններու տնօրէններ, վարչական պատասխանատուներ, տընտեսական փոքր ծրագիրներու անհատական նախաձեռնութիւններու ձեռնարկողներ եւ այլ ոլորտներու մէջ գործողներ իրենց ներդրումը կ'ունենան թէ՛ պատերազմի հետեւանքով ընկերութեան մէջ յառաջացած մարդուժի մեծ բացը գոցելու, թէ՛ իրենց տնտեսական վիճակը բարելաւելու եւ թէ՛ իրենց զիրենց դրսեւորելու որպէս ընկերութեան մէջ ստեղծագործ ու արարող տարրեր:

Պետութիւնը եւս պատերազմի եւ տնտեսական շրջափակումի պայմաններուն ներքեւ կը ջանայ քաջալերել, խրախուսել արտադրող կնոջ աշխատանքը եւ առիթներ ստեղծել՝ անոր տաղանդը արտադրական ուժի եւ տնտեսական կեանքի բարելաման ծառայեցնելու: Այդ առիթներէն առաւելաբար նկատելի են տնտեսական փոքր ծրագիրներու խրախուսումը, գործարար կիներու վարկեր տրամադրելու կամ նուրբ գումարներ տալու, անոնց արտադրանքներու վաճառքը ապահովող ցուցահանդէսներ կազմակերպելու պետական մարմիններու նախաձեռնութիւնները, որոնց մէջ հայ կինը եւս ներգրաւուած է թէ՛ իր ձիրքերը յայտնաբերելու, թէ՛ տնտեսական իր կեանքը բարելաւելու երկրի ծանր պայմաններուն լոյսին տակ եւ թէ՛ սուրիական ընկերութեան տարբեր ծրագիրներուն իր մասնակցութիւնը բերելու՝ դուրս գալով լոկ հայկական սեղմ շրջանակներու մէջ գործելու իր նախկին վիճակէն եւ բացուելով սուրիական լայն միջավայրին:

Ազգային կեանքին մէջ եւս սուրիահայ կնոջ դերը ծաղկեցաւ: Այսօր վարչական մարմիններու, կրթական, մարզական, բարեսիրական եւ մշակութային հաստատութիւններու մէջ իգական սեռին ներկայութիւնը կրկնապատկուած, այլ եռապատկուած է: Ան անելի մեծ թիւով մասնակցութիւն կը բերէ, յատկապէս գաղթի հետեւանքով արական սեռի ներկայացուցիչներուն կամ երիտասարդներուն թիւին նուազ ումը նկատի ունենալով:

Ուսումնական ոլորտին մէջ եւս նկատելի է իգական սեռին արձանագրած յառաջընթացը: Այսօր համարեա՛ չունինք բարձրագոյն ուսման չհետեւող երիտասարդուհիներ, բոլորն ալ լծուած են բարձրագոյն ուսման եւ ժամանակակից մասնագիտութիւններու եւ գործերու մէջ ներգրաւուելու աշխատանքին:

Այո՛, երկրի տնտեսական ու կենցաղային պայմանները ծանր են ամէն ժամանակներէ աւելի, սակայն աշխատանքի կրկնապատկումով եւ երկրի տարբեր ոլորտներուն ստեղծագործ մասնակցութեամբ միայն կարելի է յաղթահարել այս պայմանները, ոչ թէ ամուլութեան մատուցելով: Իրաւացիօրէն աշխատանքն է որ մեզ բոլորս դուրս կրնայ բերել երկրի ծանր պայմաններու գերճնշող ազդեցութենէն ու գարգացման առաջնորդել եզակի այս պայմաններուն մէջ անգամ:

Հպարտութիւն է այսօր բոլորիս համար տեսնել մեծաթիւ հայ բժըշկուհիներ, փաստաբանուհիներ, համալսարանի դասախօսուհիներ, երեսփոխաններ, դեսպաններ, տնօրէնուհիներ միջավայրի մը մէջ, որ այլ երկիրներու կողմէ փակ կը համարուի, որպէս արաբական կամ միջինարեւելեան միջավայր: Իրականութեան մէջ, սակայն, սուրիացի կնոջ, իգական սեռին դիմաց այսօր աշխատանքի, ստեղծագործութեան, տնտեսավարութեան բոլոր առիթները բաց են ու ան կը վայելէ ստեղծագործելու եւ արտադրելու բացարձակ ազատութիւն:

Մեզի կը մնայ գնահատել, քաջալերել իգական սեռին ներգրաւուածութիւնը տարբեր ոլորտներու մէջ, որպէս ընկերութեան կարեւոր մէկ տարր, ստեղծել ստեղծագործ աշխատանքի միջավայր եւ նպաստել՝ յաղթահարելու իգական սեռի աշխատանքը խոչընդոտող բոլոր պատեւները:

Տոկալով սուրիական տագնապի ուժգին քամիներուն, սուրիահայ կինը ցոյց տուաւ, որ ուժեղ, յանդուգն եւ արարող ներկայութիւն է՝ իր ընտանիքին եւ հասարակութեան մէջ:

«Գ.»

-ՄԱԿ-ի մէջ Սուրիոյ մնայուն բանագնաց դեսպան Քուսա Տահիաք ՄԱԿ-ի ընդհանուր ժողովի մասնաւոր նստաշրջանին յայտնեց, որ Սուրիա կը դատապարտէ ՄԱԿ-ի պաղեստինցի գաղթականներու օժանդակութեան գործակալութեան՝ ԱՆՐՈՒԿ-ի գրասենեակին վրայ Իսրայէլի յարձակումը եւ կոչ կ'ուղղէ այն պետութիւններուն, որոնք կասեցուցած են իրենց ֆինանսաւորումը միջազգային այս կազմակերպութեան՝ վերականգնելու գայն:



Դեսպան Տահիաք ըսաւ. «Հինգ ամիսէ ի վեր կը շարունակուին Պաղեստինի ժողովուրդին դէմ իսրայէլեան գրոհը, պատերազմը եւ ցեղասպանութիւնը: Այս բոլորին կողքին, Իսրայէլ վերջերս թիրախ դարձուցած է ԱՆՐՈՒԿ գործակալութիւնը»: Տահիաք կարեւոր համարեց Պաղեստինի ժողովուրդին աջակցելու ԱՆՐՈՒԿ-ի առանցքային դերը:

-Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ Գահիրէ ժամանեց՝ մասնակցելու Արաբական Լիկայի խորհուրդի 161-րդ նըստաշրջանի աշխատանքներուն, որոնք ընթացք առին Զորքշարքի, 6 Մարտ 2024-ին:

Գահիրէի սուրիական դեսպանատան մէջ նախարար Մըքտատ հանդիպում ունեցաւ եգիպտոսի մէջ սուրիական համայնքի ձեռնբերեցներուն եւ արդիւնաբերողներուն հետ:



Հանդիպումին ընթացքին կողմերը խորհրդակցեցան Սուրիոյ մէջ իրենց աշխատանքը դժուարացնող հարցերուն շուրջ: Նախարար Մըքտատ յայտնեց, որ նախարարութիւնը մտադիր է բարենպաստ պայմաններ տրամադրել սուրիացի ձեռնբերեցներուն, որպէսզի մասնակցին Սուրիոյ վերականգնումի աշխատանքներուն, ապահովելով թէ՛ երկրի ազգային եւ թէ՛ իրենց սեփական շահերը:

-Սուրիոյ Հանրապետութեան մասնակցութեամբ, Յորդանանի մայրաքաղաք Ամմանի մէջ ընթացք առաւ պարէնի միջազգային կազմակերպութեան՝ ՖԱՌԻ-ի 37-րդ շրջանային վեհաժողովը:



Սուրիոյ Հանրապետութեան պատուիրակութեան նախագահեց Սուրիոյ գիւղատնտեսութեան նախարար երկրչփ. Մուհամմետ Հասսան Զաթնա:

-«Տամ Փրէս» հաղորդեց, որ նախորդ օրերուն, սուրիական բանակը Հալէպի արեւմտեան արուարձանին մէջ ղեմ դրաւ գինեալ ահաբեկչական խմբաւորումներու «Քուպթան ալ-Ճապալ» շրջանը ներթափանցելու փորձին:



Սուրիական բանակը միաժամանակ թնդանօղներով հրթիռակոծեց Ղապ շրջանի հիւսիսարեւմտեան բաժինին եւ Իտլիպի հարաւային արուարձանին մէջ գինեալ ահաբեկչական խմբաւորումներու կերտները:

-Սուրիոյ կառավարութիւնը, վարչապետ Հուսէյն Արնուսի նախագահութեամբ, իր շաբաթական հերթական նիստին ընթացքին ճշդեց Ռամատան ամսուան ընթացքին նախարարութիւններուն եւ կառավարական հաստատութիւններու աշխատանքային ժամերը: Նշեալ հաստատութիւնները պիտի գործեն առաւօտեան ժամը 9:00-էն յետմիջօրէի ժամը 2:30:



ԹՈՒՐՔԻԱ Կ'ԱՐԳԻԼԷ ԵՐԿԻՐ ՄՈՒՏՔՈՒՆ ՕՏԱՐԵՐԿՐԱԳԻՆԵՐՈՒՆ, ՈՐՈՆՔ ԿՈ ԶՆՆԱԴԱՏԵՆ ՆԱԽԱԳԱՅ ԷՐՏՈՂԱՆԸ



Յարուհ Սատունեան

Թուրքիոյ կառավարութիւնը՝ բռնապետ ղեկավար Ահմեդ Թայիպ Էրտողանի գլխաւորութեամբ, արգիլած է մուտքը՝ 150 երկիրներէ աւելի քան 100 հազար օտարերկրացիներու, որոնք շարքին՝ լրագրողներ եւ ակադեմիկոսներ, միայն այն պատճառով, որ անոնք քննադատական տեսակետներ արտայայտած են կառավարութեան մասին:

Ասիկա ժողովրդավարութեան ամենէն հիմնական սկզբունքն է՝ խօսքի ազատութեան խախտում է: Նաեւ՝ ՆԱԹՕ-ի եւ Եւրոպական խորհուրդի Թուրքիոյ անդամակցութեան չափանիշներու խախտում է, որ հիմնուած է «ժողովրդավարութեան, մարդու իրաւունքներու եւ օրէնքի գերակայութեան ընդհանուր արժեքներու վրայ»:



Այսուամենայնիւ, ո՛չ ՆԱԹՕ-ն, ո՛չ ալ Եւրոպական խորհուրդը կը քննադատեն Թուրքիան՝ իրենց վեհ սկզբունքներուն բազմաթիւ եւ երկարատեւ խախտումներուն համար: Նոյնիսկ այն ատեն, երբ Մարդկային իրաւունքներու Եւրոպական դատարանը, որ Եւրոպական խորհուրդի մէկ մասն է, կ'որոշէ, որ Թուրքիան մեղաւոր է նման իրաւունքներու խախտման մէջ, Թուրքիոյ կառավարութիւնը պարզապէս կ'անտեսէ Դատարանի վճիռը եւ կը մերժէ վճարել սահմանուած դրամական տուգանքը, թէեւ անոր վճիռին ենթարկուիլը պարտադիր է բոլոր անդամներուն համար:

Շուետ բնակող թուրք հետաքննող լրագրող Ապտուլլահ Պոզքուրթ բացայայտած է թրքական արգելքը Nordic Monitor-ի՝ «Թուրքիոյ գաղտնի սեւ ցուցակը կը թիրախաւորէ օտարերկրացի քննադատները մուտքի արգելքներով եւ արտաքսումներով» խորագիրը կրող յօդուածին մէջ:

Թուրքիոյ կառավարութեան գաղտնի տուեալներու ցուցատախտակին վրայ արգիլուած օտարերկրացիները կը նշուին G ծածկագրով, որուն կը յաջորդեն երկնիշ թիւեր՝ նկարագրելով այն յստակ պատճառները, որոնք կը սահմանափակեն այդ մարդոց երկիր մուտքը:

«G-87 սահմանափակման ծածկագիրը, թերեւս, օտարերկրացիներու համար ամենէն յաճախակի օգտագործուող նշումն է, որ կը նշանակէ, թէ այս ծածկագիրով պիտակաւորուած անհատը սպառնալիք կը նկատուի հանրային ընդհանուր անվտանգութեան համար: Նման դասակարգում մը հիմնաւորող ենթադրեալ ապացոյցները յաճախ կը բխին հետախուզական աղբիւրներէ կամ ռիսքային խումբի մը կողմէ, որ պատասխանատու է օդակայաններ կամ սահմանային անցման կետեր հասնող ճամբորդները գննելու գործով», կը պարզաբանէ Պոզքուրթ:

Անտեղեակ օտարերկրացիները իրենց արգելքին մասին կը գիտնան միայն թրքական օդակայան ժամանելէ ետք: Անոնցմէ քանի մը հոգիին կ'արգիլեն մուտք գործել, իսկ միւսները՝ կը ձերբակալեն: Անոնց դէմ արգելքի պատճառը կրնայ ըլլալ նոյնքան անմեղ, որքան ընկերային ցանցերու վրայ հաղորդագրութիւն տեղադրելը կամ գայն հաւնիլը: Սահմանափակող միջոցները կը խախտեն ոչ միայն այդ մարդոց իրաւունքները, այլ նաեւ Թուրքիոյ սահմանադրութիւնը, քանի որ նման արգելքներ թոյլատրող օրէնքներ ընդունուած չեն:

Օտարերկրացիներու մասին տեղեկութիւնը կը հաւաքուի անվտանգութեան գլխաւոր տնօրէնութեան (Emniyet) եւ Ազգային հետախուզական կազմակերպութեան (MIT), կամ արտերկրի Թուրքիոյ դեսպանատուներու դիւանագետներու կողմէ, որոնք կը վերահսկեն բոլոր անոնք, որոնք քննադատական մեկնաբանութիւններ կ'ընեն Էրտողանի կառավարութեան մասին: Իրավիճակը աւելի կը բարդանայ, երբ այդ օտարերկրացիներէն ոմանք կ'անուանուին ահաբեկիչներ, առանց որեւէ ապացոյցի, պարզապէս Թուրքիան քննադատելուն համար:

2019-ին, ներքին գործերու նախկին նախարար Սուլէյման Սոյլու իրապարակաւ նախագուշացուց. «Եւրոպայի մէջ, յատկապէս Գերմանիա, կան մարդիկ, որոնք կը մասնակցին ահաբեկչական կազմակերպութիւններու հանդիպումներուն, ապա կու գան Անթալիա, Պոտրում եւ Մուկլա (առողջարանային քաղաքներ), հանգստանալու համար: Մենք նախագուշակական միջոցներու ձեռնարկած ենք...: Թող գան, տեսնենք, արդեօք կրնա՞ն դիւրութեամբ մուտք գործել (երկիր): Այդքան ալ դիւրին չէ: Մենք կը ձերբակալենք զանոնք եւ եւտ կը դրկենք»:

Հակասականօրէն, Էրտողանի կառավարութիւնը դիրացուցած է «Իսլամական պետութեան» անդամ իսկական ահաբեկիչներու մուտքը՝ Թուրքիա: Պոզքուրթ կ'աւելցնէ, որ «2012-ին, Էրտողան անձամբ օգնած է Ալ-Զախտայի երբեմնի հովանաւորին մուտք գործել Թուրքիա՝ հակառակ ՄԱԿ-ի անվտանգութեան խորհուրդի կողմէ անոր դէմ սահմանուած արգելքին եւ

քանի մը անգամ գաղտնի տեսակցած է անոր հետ, Սթանպուլի եւ Անգարայի մէջ»:

Երբեմն թրքական կառավարութիւնը կը ձերբակալէ ամբողջովին անմեղ օտարերկրացի այցելու մը՝ ուրիշ երկրէ մը քաղաքական օգուտներ կորզելու կամ բանտարկեալներ փոխանակելու նպատակով: Թրքական նմանօրինակ շանյաթ մը տեղի ունեցաւ, երբ նախագահ Էրտողան իրամայեց ձերբակալել ամերիկացի հոգեւորական Էնտրիկ Պրանսընը եւ առաջարկեց գայն փոխանակել մահմետական հոգեւորական Ֆեթուլլահ Կիլիչ-նի հետ, որ Թուրքիայէն ԱՄՆ փախած էր՝ Էրտողանի դէմ յեղաշրջում կազմակերպելու կեդ՝ մեղադրանքներու ենթարկուելէ ետք: Նախագահ Թրամի մերժեց Կիլիչը փոխանակել Պրանսընի հետ եւ Թուրքիոյ դէմ սահմանեց պատժամիջոցներ: Երկու տարի բանտ մնալէն ետք, հոգեւորական Պրանսըն վերջապէս ազատ արձակուեցաւ եւ իրեն թոյլ տրուեցաւ վերադառնալ ԱՄՆ:


Թուրքիոյ կառավարութեան սեւ ցուցակին վրայ յայտնուած մարդոց ընդարձակ ցուցակը շահութաբեր առետուր դարձած է իրաւաբանական որոշ ընկերութիւններու համար, որոնք մասնագիտացած են պաշտպանելու մէջ իրաւունքները անոնց, որոնք երկիր մուտք արգիլուած է: Երբեմն, նոյնիսկ երբ դատարանները յանձնարարած են կառավարութեան՝ հանել անձի մը անունը սեւ ցուցակէն, թրքական կառավարութիւնը մերժած է ընել այդ՝ պնդելով, որ նշեալ անձին ապացոյցները չեն կրնար ներկայացուիլ դատարանին մէջ, որովհետեւ անոնք պետական գաղտնիք կը նկատուին:

Եզրափակելով իր յօդուածը՝ Պոզքուրթ կը գրէ. «Սեւ ցուցակը Էրտողանի կառավարութեան գործիքակազմին մէջ կը ծառայէ իբրեւ գործիք՝ քննադատներու, մասնաւորաբար օտարերկրացի լրագրողներու, գործիչներու եւ իրաւապաշտպաններու դէմ ի գործ դրուած վախազդու արշաւը շարունակելու համար: Արգիլելով մուտքը կամ յանկարծակի արտաքսումներ իրականացնելով, կառավարութիւնը օգտագործած է սեւ ցուցակը՝ սահմանափակելու համար օտարերկրացի լրագրողներու լրագրողական գործունէութիւնը: Վերջին տասնամեակին, օտարերկրացի բազմաթիւ լրագրողներ վնասուած են այս կիրարկումէն՝ իրենց անունները ցուցակին վրայ աւելցած տեսնելու հետեւանքներուն բախելով: Կը թուի, թէ Էրտողանի կառավարութեան պատժիչ իշխանութիւնը պիտի շարունակէ սեւ ցուցակը պահպանել մօտիկ ապագային եւս»:

Այս հարցին պարզ լուծումը այն է, որ օտարերկրացիները պէտք չէ մեկնին Թուրքիա՝ որպէսզի իրենք գիտենք պաշտպանուած ըլլան հետապնդում, արտաքսում կամ ձերբակալութեւ: Թուրքիա երթալէն հրաժարիլը մեծ հարուած կը հասցնէ երկրին, որովհետեւ ամեն տարի միլիոնաւոր զբօսաշրջիկներ Թուրքիա կ'այցելեն՝ տասնեակ միլիառաւոր տոլարներ ներարկելով Թուրքիոյ սնանկացած տնտեսութեան մէջ:

**Արեւելահայերէնի թարգմանեց՝ Բուգաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան**

Ք Ա Մ Ա Յ Ո Ւ Մ



Յրանդ Մարգարեան

Քարացեր է օգը այս գորը

Կամարակապ երկինքն կապոյտ
Մշուհապատ
Մռայլ ու լուռ
Մահն է գրկած

Քարացեր են եւ ծառերը
Լուռիներն ալ մահացումի շապիկ հագած
Մածկեր է դաշտ, ծածկեր երկինք, ծածկեր երկիր
Եւ ամէն ինչ քարացած է...

Պահը այս մեղկ քարացումի քարացումով քարացած է

Լուռիները լուռիեան մէջ մահացած է...

www.kantsasar.com

www.kantsasar.com

www.kantsasar.com

«ԱԶԱՏ ՕՐ»-Ը 80 ՏԱՐԵԿԱՆ Է

ԽՈՆԱՐՅՈՒՄ՝ 80-ԱՄՏԱՅ ԵՐԹԻԴ

Յունաստանի մեր գործընկեր «Ազատ Օր»-ի 80-ամեակը շնորհաւորելով 80 տարիներու անոր ներդրումը սփիւռքահայ մամուլին, դաշնակցական մամուլին համբերատար աշխատանքի, գաղափարական յենսփիւնի արտացոլացումը կը համարենք աներկբայօրէն: Ողջունելի է, հակառակ տիրող դժուարութիւններուն, նոր ձեւաչափով թերթին առաքելութիւնը շարունակելու որոշումը:

Բարի երթ կը մաղթենք թերթին, անոր ժրջան խմբագրակազմին, որ անցնող տարիներուն յաջողեցաւ լուսաբանել յունահայ կեանքի բազմերես կեանքը, պահել իր գաղափարական ուղին եւ արձագանգել հայրենի եւ սփիւռքեան տարբեր երեւոյթներու, միշտ իր ընթերցողներուն քաղաքական, հրապարակագրական թէ ազգային տարբեր հետաքրքրութիւնները բաւարարելով, արեւմտահայերէնը շնչող լեզու պահելով ու հանրային կարծիքը գերծ պահելով ապատեղեկատուական ազդեցութիւններէ:

ՀՀԴ Յունաստանի Կեդր. Կոմիտէին քաջալերանքով թերթը վճռած է շարունակել իր ներկայութիւնը հայ, Դաշնակցական մամուլին մէջ, նոր տեսլականով:

Բարի երթ «Ազատ Օր»-ի նուիրեալներուն:

«Գանձասար»

ԴԷՊԻ ԱՊԱԳԱՆ ՆԱՅՈՂ ՏԵՍԼԱԿԱՆՈՎ

Մօտ երկու ամիս առաջ, մեր ընթերցողներուն ներկայացուցինք «Ազատ Օր»-ի հրատարակութեան տարբեր ձեւը, որուն համաձայն, թերթը առանց ընդհատելու իր օրական ներկայութիւնը գաղութէն ներս, պիտի ունենայ ամենօրեայ էլեկտրոնային հրատարակութիւն միայն, իսկ Ուրբաթ օրուան թիւը պիտի ըլլայ նաեւ տպագիր, աւելի ճոխ էջերով եւ նիւթերով: Միաժամանակ, կը յայտնեինք, թէ թերթիս պաշտօնէութիւնը ու անոր պատասխանատու մարմինները արդէն ընթացքի մէջ դրած էին հրատարակութեան նոր ձեւաչափի մը կազմութիւնը, որ քայլ պիտի պահէ մամուլի աւելի արդի ըմբռումներուն հետ:

Ահա այսօր, «Նոր Օր» օրաթերթի 100-ամեակին եւ անոր շարունակութիւնը հանդիսացող «Ազատ Օր»-ի հրատարակութեան 80-ամեակին առիթով, մեր ընթերցողները իրենց ձեռքին մէջ կը բռնեն 12 էջերէ բաղկացած նոր թիւ մը, բոլորովին տարբեր էջադրումով, նոր տառատեսակներով եւ նոր կազմութեամբ: Միաժամանակ, անոր մէջ լոյս կը տեսնեն ճոխ նիւթեր, որոնք կը գոհացնեն մեր ընթերցողներու տարբեր ճաշակները: Այսպէս, թերթը այսուհետեւ պիտի հրատարակուի իր նոր ձեւաչափի սահմաններուն մէջ, օրական էլեկտրոնային 4 էջով, իսկ Ուրբաթ օրուան թիւը տպագիր եւ էլեկտրոնային՝ 12 էջով:

Ժամանակի պահանջ էր կատարուած փոփոխութիւնը: Յաճախ անդրադարձած ենք մամուլի դիմագրաւած տագնապին, էլեկտրոնային միջոցներու տիրական ներկայութեան, հայ թերթի նահանջին ու նոր սերունդին կողմէ դասական մամուլի ընթերցասիրութեան պակասին: Սակայն, որքան ալ ձեռքի հեռաձայններու կամ այլ էլեկտրոնային սարքերու պատահանները հրապարակիչ դառնան իրենց գուճագեղ նկարներով ու բազմատեսակ ճոխութեամբ, կարելի չէ անոնք համեմատել ու նոյն նժարին վրայ գետեղել տպագիր մամուլի արժէքներուն հետ: Թերթը կը շարունակէ հանդիսանալ իրական լուրի ու վերլուծական գաղափարներու ամենէն արժանահաւաստ ու փաստացի միջոցը, երբ անդին, համացանցին մէջ, կեղծ լրատուութիւնը ողողած է մարդոց տեսապատկերն ու մտածումներու աշխարհը, իրականական աւեր գործելով քննական կարողութեան եւ կարծիք ստեղծելու մարդկային յատկանիշներուն:

Դժբախտաբար, հայկական համացանցի ոլորտն ալ ինկած է կեղծիքի աշխարհին մէջ, յաճախ այլանդակուած ու վարկաբեկիչ լուրերու, եղելութիւնները այլափոխելու, աժան վերագրումներու եւ թիւր կարծիք ստեղծելու իրարանցումին մէջ թաւալած ըլլալով:

Միայն արժանահաւաստ մամուլը, որուն մէջ նաեւ դասական թերթը, ան որ յստակ պատկանելիութիւն կը ներկայացնէ, ազգի հարազատ ուժերու եւ կազմակերպ կառոյցներու ակունքէն կը սնանի, կըրնայ վայելել ժողովրդային ընդունելութիւն եւ յարգանք:

Այս բոլորին լոյսին տակ, յունահայ գաղութի սիրուած օրաթերթը, որ միաժամանակ կը հանդիսանայ եւրոպական տարածքի միակ օրաթերթը, կը շարունակէ իր անխափան հրատարակութեան ուղին, վերանորոգուած բովանդակութեամբ ու տեսքով: Միշտ երիտասարդ ու կենսունակ մնալու նախանձախնդրութեամբ, մեր թերթը իր 80-ամեայ պատմական երթի սեմին, կը վերանորոգէ իր հաւատարմութիւնը իր թանկագին ընթերցողներուն հանդէպ, հայեացքը սեւեռած ըլլալով ապագայի տեսլականներուն:

Կստահ ենք, որ մեր ընթերցողները, անգամ մը եւս պիտի գրկեն

իրենց սիրելի օրաթերթը, ինչպէս միշտ: Անոնք որեւէ շաբա պիտի չխնայեն մատնանշումներով, թելադրանքներով, գործնական զօրակցութեամբ եւ առօրեայ կապով՝ թերթի բարելաման ու յարատեւման, անոր առաքելութեան հզօրացման համար յունահայ գաղութէն ներս:

Վաղը երեկոյեան, մեր թերթը պիտի նշէ իր 80-ամեայ երթի փայլուն ճանապարհը, «Չաւարեան» կեդրոնին մէջ կազմակերպուած հրապարակային ելոյթին ընթացքին:

Բոլորս միասնաբար, համախումբ եւ համատեղ կամքով վերանորոգենք մեր հաւատքը յունահայ մամուլի արժանաւորին՝ «Ազատ Օր»-ին, միաժամանակ մեր յարգանքի տուրքը տալով «Նոր Օր»-ի ու անոր երախտաւորներու վաստակին:

«Ազատ Օր»-ը սոսկ լրատուական միջոց մը ըլլալու հանգամանքին մէջ չէ սահմանափակուած երբեք: Մեր թերթի դերը գաղութէն ներս իր անփոխարինելի նշանակութիւնը ունեցած է հայադրոշմ սերունդներու կազմաւորման, ազգային ու քաղաքական միտքի ձեւաւորման, հայրենի աշխարհը վառ պահելու, մերոպեան գիրի լոյսը սփռելու գործին մէջ:


Թանկագին այս ժառանգը եւ ապագայի տեսլականները թող առաջնորդեն մեր թերթի վերանորոգուած ուղին:

«Ազատ Օր»-ի խմբագրական

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ

ԿԱՐԱՊԵՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարեկիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 10 Մարտ 2024-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Զառանից Մանկանց Մայր եկեղեցւոյ մէջ, Սալիպէ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին «Նիկոլ Աղբալեան» սրահը:

ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



Խոյ

Այս շաբաթ դժուարություններ կը ստեղծուին ձեր աշխատանքի ընթացքին, սակայն կը յաղթահարեք զանոնք: Այս շրջանը յարմար է նաեւ նոր բաներ սորվելու համար:



Ցուլ

Այս շրջանին Ցուլերը կը ստանան բազմաթիւ հարցերու պատասխաններ, լուծելով իրենց հարցերուն մեծ մասը:



Երկուորեակ

Այս շաբաթ բարենպաստ շրջան է աշխատանքային հարցեր լուծելու, ուստի յետաձգեցէ՛ք ձեր գործերը եւ լուծեցէ՛ք ձեր հարցերը:



Խեցգետին

Շաբթուան սկիզբը բեղուն գործունեութեամբ պիտի լեցուին ձեր ժամերը: Շարք մը ծրագիրներ կեանքի պիտի կոչուին:



Առիծ

Եթէ ձեր աշխատանքին մէջ վրստահելի գործակիցներ ունենաք, կարելիութիւն պիտի ունենաք լուրջ նախագիծեր իրագործելու եւ նիւթական շոշափելի եկամուտ ապահովելու:



Կոյս

Օգտակար կ'ըլլայ երբեմն փորձառու մարդոց յորդորներուն ականջ տալը, որովհետեւ լայնածաւալ եւ բազմաթիւ աշխատանքը անպայման վրիպումներու առիթ կրնայ ստեղծել:



Կշիռք

Այս շաբաթ բարենպաստ պայմաններ կը ստեղծուին ձեր անձնական յարաբերութիւնները զարգացնելու համար: Եղէ՛ք յանդուգն եւ նախաձեռնող:



Կարիճ

Յաճախ գործերու մէջ բախտի ապաւինիլը անհրատեսական է: Վրստահեցէ՛ք ձեր ուժերուն եւ աշխատեցէ՛ք նոր հմտութիւններ ձեռքբերել:



Աղեղնաւոր

Գարնան ծաղկումին հետ առիթներ պիտի ստեղծուին արձակուրդի եւ բնութեան մէջ հանգիստի ժամեր վայելելու:



Այծեղջիւր

Գերսպառիչ աշխատանքը կըրնայ ուժասպառ դարձնել ձեզ: Ձանացէ՛ք հանգիստի ժամեր գտնել ձեր ընտանիքի անդամներուն հետ:



Ձրիս

Նախքան խոստումներ տալը լաւ սերտեցէ՛ք ձեր կարողութիւններն ու ազատ ժամերը, այլապէս պիտի չկարենաք իրականացնել ձեր բոլոր խոստումները:



Ձուկ

Այս շաբաթ նպատակայարմար է ամուսնական կեանքին մասին մտածելու եւ այդ ուղղութեամբ յարաբերութիւններ մշակելու:



ՓՈՔՐԵՐՈՒՄՆ ԿԵՏ ԵՐԲԵՔ ՄՊԱՌՆԱԿԻՑ ՈՃՈՎ ՄԻ՛ ԽՕՄԻՔ

Հիւսթընի համալսարանի ամերիկացի գիտնականները հետազոտութիւն մը կատարելով պարզած են, որ մանուկներու դաստիարակութիւնը սպառնալիքներով կամ սարսափազդու խօսքերով հետազային՝ պատանի կամ երիտա-

Մայրը պետք է որ օգնէ նաեւ մանուկին՝ յաղթահարելու իր քրոջ կամ եղբոր հանդէպ նախանձը:

Մանուկին առողջ զարգացման համար հետ սահմանեցէ՛ք փոքրիկ նպատակներ եւ օգնեցէ՛ք որպէսզի ինքնուրոյն կարենայ հասնիլ այդ նպատակներուն: Ապա գնահատեցէ՛ք զինք ընտանիքի անդամներուն ներկայութեան:



Վարժեցուցէ՛ք մանուկը պատասխանատուութիւն կրելու՝ փոքր տարիքէն իսկ, մերթ ընդ մերթ անոր որոշ խաղալիքներ դասաւորել սորվեցնելով, քրոջ կամ եղբոր օգնելու առիթներ ստեղծելով եւ այլն:

Պատանի տարիքին սորվեցուցէ՛ք ինքնուրոյն մտածել, յատուկ գումար մը ունենալ, ծախսել եւ խնայել՝ ի հարկին գանձանակ մը նուիրելով անոր:

Ձեր տուած խոստումները անպայման յարգեցէ՛ք, որպէսզի մանուկն ալ աճելով ու զարգանալով նոյն վարքը ժառանգէ, այլապէս ինք եւս մեծնալէն ետք տուած խոստումները պիտի չյարգէ:

սարդ տարիքին, տագնապալի խանգարումներ կը յառաջացնէ եւ խոչընդոտ կը հանդիսանայ անոնց առողջ զարգացման:

Հոգեկան առողջութեան խանգարումները կը բնութագրուին՝ վախի եւ անհանգստութեան եւ այս երկուքին զարգացումներով, որոնք կրնան խանգարել պատանիին առօրեայ կեանքը եւ ներքին խաղաղութիւնը:

Հետազոտութեան մասնակցած են 18-էն 24 տարեկան 855 ուսանողներ: Մասնակիցները առցանց պատասխանած են այն հարցումին, թէ իրենց մանկութեան ազդուա՞ծ են ծնողներու սպառնալից վարքագիծէն:

Պատասխաններու ուսումնասիրութիւնը պարզած է, որ թէ՛ հօր եւ թէ՛ մօր կողմէ սպառնալից վարքագիծը հոգեբանական ճնշումի, անօգնականութեան եւ բարդոյթներու ուղղած է փոքրիկին ներաշխարհը:

Հոգեբաններ կը պարզեն, որ մանուկները բարդոյթներէ զերծ պահելու համար պետք է առաւելագոյն սերը ցոյց տալ անոնց, օգնել անոնց աճման իւրաքանչիւր փուլին, այնպէս մը որ մանուկը թէ՛ կարենայ ինքնուրոյն զարգանալ եւ թէ՛ ծնողքին սերն ու ներկայութիւնը զգալ:

Հոգեբաններ կարելորութիւն կու տան նաեւ քոյր-եղբայրներու միջեւ հաւասարութեան սկզբունքին: Ծնողը պետք է զերծ մնայ գաւազները բարդատելու վարքագիծէն եւ հաւասարապէս արժեւորէ իւրաքանչիւրին ձեռքբերումը: Իսկ սխալները սրբագրել համբերութեամբ, առանց գոռալու կամ սպառնալու, նոյնիսկ եթէ հարկ ըլլայ նոյն թերադրանքը քնքշութեամբ կրկնել մէկէ աւելի անգամներ:

Քաջալերեցէ՛ք, որ պատանին իր հարցերը ձեզի հետ քննարկէ եւ լուծումներ գտնէ:

Քաջալերեցէ՛ք, որ պատանին մարզանքի հետեւի, որպէսզի մարմինը առողջ մնայ, ինչպէս նաեւ օգնեցէ՛ք անոր գտնելու հետաքրքրու-



թիւնները զարգացնող միջավայր, անկախ դըպրոցէն, որպէսզի կարենայ առողջ միջավայրի մէջ զարգանալ եւ զարգացնել իր հետաքրքրութիւնները:

Ամենակարեւորը՝ երբեք սպառնական ոճով մի՛ խօսիք ձեր գաւկին հետ, նոյնիսկ եթէ ան սխալներ գործէ ու կրկնէ գանոնք: Դաստիարակութիւնը մե՞ծ համբերութիւն ու պատասխանատուութիւն պահանջող առաքելութիւն է: Միշտ համբերատար ու տեղեկացուած եղէ՛ք, ի հարկին մանկավարժական գիրքեր կարդալով կամ մասնագետի դիմելով:

Մարզական



Ռաֆֆի Սիկատեան

ՏԵՂԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸՆ

-Սուրիոյ պասքեթի Բ. դասակարգի Կիոյեանութեան աւարտական քառեակի մրցումներուն, ՅԱՄ-ի կազմը Դամասկոսի մէջ 73 - 92 արդիւնքով յաջողեցաւ պարտութեան մատնել հիւրընկալ Ֆէյհա խումբը:

-Սուրիոյ ֆուտպոլի Ա. դասակարգի Կիոյեանութեան մրցումներուն, Հալէպի Ահլին 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնուեցաւ ադիւսակին առաջին դիրքը գրաւող Ֆըթուլէի խումբէն, ինչպէս նաեւ Հուրիէն 1 - 0 արդիւնքով զիջեցաւ Թալիաաին: Նոյն արդիւնքով Հըթթինը յաղթեց Ճէշին, իսկ Թըշ-րինը՝ Ուասպէին:



ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ՄԱՆՉԵՍԹԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱՄԵՐՏԵՑԱՐ Ի ՆՊԱՍՏ ՄԻՅԻՆՆ

Կիրակի օր Անգլիոյ Փրեմիեր Լիգի առաջնութեան 27-րդ փուլի մրցումներուն, Կիոյեան Մանչեսթըր Սիթին իր տան մէջ մրցում մը ունեցաւ Մանչեսթըր Իւնայթըտի հետ: Հանդիպումը իր աւարտին հասաւ 3 - 1 արդիւնքով՝ ի նպաստ Սիթիին: 8-րդ վայրկեանին, հանդիպման հաշիւը բացուած յայտարարեց Իւնայթըտի անգլիացի յարձակող Մարկուս Ռաշֆորտը: Քաթալոնեացի Կոստէ Կուարտիլայի գլխաւորած խումբը առաւելութեան հասաւ շնորհիւ անգլիացի կիսապաշտպան Ֆիլ Ֆոտէնի եւ



Նորվեկիացի յարձակող Էրլինկ Հալանտի կողմէն: Ադիւսակի առաջին դիրքը գրաւող Լիվըրպոլը հիւրընկալեց Նոթինհեմ Ֆորեսթը: Գերմանացի Եորկէն Կլոպի գլխաւորած կազմը դժուարութեամբ կրցաւ յաղթել՝ 1 - 0 արդիւնքով: Խումբին միակ կողմը նշանակեց Նորվեկիացի յարձակող Տարուին Նունիեզին՝ յալէտալ 9-րդ վայրկեանին: 63 կետով մրցաշարքի ադիւսակը գլխաւորեց Լիվըրպոլը, որուն մէջ կէտի տարբերութեամբ յաջորդեց Սիթին:

ԼԵՊՐՈՆ ԾԵՅՍՍ NBA-Ի ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ ԱՌԱՋԻՆ ԽԱՂԱՅՈՐՆ Է, ՈՐ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ Է 40.000 ԿԵՏ

Լոս Անճելըս Լէյքըրզի Պասքեթպոլիստ Լեպրոն Ճէյմս Տեյլթըր ակումբին դէմ խաղին յաջողեցաւ նշանակել 26 կէտ: Ըստ kommersant.ru-ին Ճէյմս այս արդիւնքով իր մարզական կեանքի ընթացքին անցաւ 40 հազար կէտի սահմանը:

Պասքեթի ազգային մրցանակի (NBA) պատմութեան մէջ նախապէս ոչ մէկ խաղացող կրցած է արձանագրել այս արդիւնքը:

39-ամեայ Լեպրոն Ճէյմս ընդհանուր առմամբ ունի 40.017 կէտ:

Ճէյմս NBA-ի քառակի ախոյեան է (2012, 2013, 2016, 2020): Ան չորս անգամ հռչակուած է կանոնաւոր առաջնութեան եւ փլէյ-օֆֆի շարքի ամենաթանկարժէք խաղացողը: ԱՄՆ-ի հաւաքականի կազմին մարզիկը յաղթած է 2008 եւ 2012 թուականներու Ողմպիական խաղերուն:



ԽԱԶԲԱՌ (ՄԻ 478)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

| | | | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | | | | | | ■ | | | | | | |
| 2 | | | | | | | ■ | | | | | |
| 3 | | | ■ | | | | | ■ | | | ■ | |
| 4 | | | | | | ■ | | | | | | |
| 5 | ■ | | ■ | | | | | | ■ | | ■ | |
| 6 | | | | | | | | | | | | |
| 7 | | | | ■ | | | | | | | | |
| 8 | | | | | | | | ■ | | | | |
| 9 | | ■ | | | | | | | | | | |
| 10 | | | | | | ■ | | ■ | | | | |
| 11 | | | | ■ | | | | | | ■ | | |
| 12 | ■ | | | | | | | | | | | |

Հորիզոնական

- 1- Համագային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան գրական եռամսեայ պարբերականը: Ծեծածով եւ իւղով թանձրապուր:
- 2- Չօրավար Դրոյի հրամանատարութեամբ 1918-ին տեղի ունեցած հերոսամարտ: Վախճան:
- 3- Հակառակ՝ տարի: Արեւ: Յարաբերական դերանուն:
- 4- Անգիտակից մղում: Ընտանիքի տեր:
- 5- Ձայնաւոր տառեր:
- 6- Ցաւի ճիչ: Թախիծ:
- 7- Տառի մը անունը: Տարածքի միաւոր:
- 8- Հայկական Տաւրոս լեռնահամակարգին եւ Մուշ քաղաքին մօտ գտնուող լեռ: Անարկայ:
- 9- «Էլեկիա» երաժշտական ստեղծագործութեան հեղինակին անունը: Կարող:
- 10- Հարցական դերանուն: Ռամկօրէն՝ այո: Հակառակ՝ 5070:
- 11- Ողբալ: Նուրի ծառ: Եական բայ:
- 12- Գուրգուրանք:

Ուղղահայեաց

- 1- Թաւ ձայն: Ամուսնացած գոյգ:
- 2- Վարակումի առաջըն առնել: Սարսափ:
- 3- Հակառակ՝ տառի մը հարեւանները: Տառի մը անունը: Ձայնանիշ:
- 4- Գիտակ: Իշխանական այծոռ:
- 5- «Պայքար» վեպին հեղինակը: Խանդ:
- 6- Հակառակ՝ 8400: Մուրճ: Տառի մը անունը:
- 7- Բայական լծորդութիւն: Ուժգին:
- 8- Կրկնուած ձայնաւորներ: Կրկնուած բաղաձայններ: Հակառակ՝ անձնական դերանուն:
- 9- Հակառակ՝ սահման: Հայ դիցաբանութեան մէջ պտղաբերութեան եւ մայրութեան աստուածուհին:
- 10- Բազմաժամանակեայ: Իրերայաջորդ տառեր:
- 11- Տարածքի միաւոր: Երկբարբառ: Եական բայ:
- 12- Վահան Թոթովենցի «Բաց Կապոյտ Ծաղիկներ» պատմուածքի հիման վրայ սկարահանուած ֆիլմ:

ԽԱԶԲԱՌ (ՄԻ 477)

| | | | | | | | | | | | | |
|----|---|---|---|---|---|---|---|---|---|----|----|----|
| | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1 | ա | ի | չ | | մ | ա | ր | տ | ն | ւ | ն | ի |
| 2 | ա | մ | | լ | ա | ա | ն | ս | կ | | | |
| 3 | յ | ա | մ | ա | յ | ր | | ւ | ն | ե | ա | |
| 4 | ա | ր | ի | | ր | ն | | ա | խ | ն | ր | ժ |
| 5 | զ | | ն | շ | ի | կ | յ | | | կ | ա | |
| 6 | ա | ւ | ա | ր | | ա | ր | տ | | լ | | ն |
| 7 | տ | | ր | շ | մ | ա | | ե | ս | | | |
| 8 | | | ե | ի | | ա | կ | ն | ա | ծ | ի | լ |
| 9 | տ | ա | | ւ | կ | ա | ր | ա | | | | ի |
| 10 | ի | ր | | ն | շ | | դ | | ն | խ | | |
| 11 | դ | ա | տ | | է | ր | ա | ն | | լ | ն | կ |
| 12 | մ | տ | ր | ա | կ | ե | լ | | | | | հ |

ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի 11/3



6° 19°

Երեքշաբթի 12/3



8° 21°

Չորեքշաբթի 13/3



10° 22°

Հինգշաբթի 14/3



8° 21°

Ուրբաթ 15/3



7° 18°

Շաբաթ 16/3



9° 19°

Կիրակի 17/3



10° 20°

ՄԱԿԱՐ ՍՐԲԱԶԱՆԸ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԵԱՄԲ ՆԵՐԿԱՅ ՉՏՆՈՒԷՅԱԻ «ՅԱՄՄԻԿՆ ՈՒ ԿԱՂՆԻՆ» ՃՈՒՅԱԶԱՆԴԵՍԻ ԲԱՅՈՒՄԻՆ

Սուրիոյ ներքին առեւտուրի Նախարար Մուհսէն ապտըլ Զարիմ Ալի բացումը կատարեց «Յամմիկն ու Կաղնին» խորագիրը կրող ցուցահանդէսի երրորդ շրջանին, Հալէպի «Շիրաթօն» պանդոկի սրահէն ներս, կազմա-



կերպութեամբ Հալէպի առեւտրական գրասենեակի գործարար կիներու յանձնախումբին, ներկայութեամբ Նախարար Ապտըլ Զարիմ Ալիի, Հալէպի Նահանգապետ Հունէյն Տիապի, հոգեւոր պետերու եւ Հալէպի առեւտրական գրասենեակի ներկայացուցիչներու:

Կազմակերպող մարմինն հրաւերին ընդառաջելով, ցուցահանդէսի բացման ներկայ գտնուեցաւ Նաեւ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ



Գերշ. Տէր Մակար Սրբ. Եպս. Ազգարեանն ու իրեն ընկերակցող ազգային պատուիրակութիւնը: Պատուիրակութեան մաս կը կազմէին՝ Առաջնորդի օգնական Հոգեւորի Տ. Մանուկ Վրդ. Պարիխանեան, Հոգեւ. Տ. Արմէն Արդ. Գալաճեան, Ազգ. Վարչութեան ատենապետ Ժիրայր Ռիսեան եւ



Ազգ. Վարչութեան եւ առեւտրական գրասենեակի անդամ Յարութ Զաւիչեան:

Քառօրեայ ցուցահանդէսին իրենց մասնակցութիւնը կը բերեն շուրջ 200 գործարար կիներ, որոնց կարգին հալէպահայեր, ինչպէս նաեւ Սուրիահայ Օգնութեան Խաչի Ձեռարուեստի, Փեթակի, Աշխատանցի եւ «Շիրակ» Պաշարի Տան յանձնախումբերը՝ իրենց այլազան արտադրանքով, ազգային ձեռագործներով, ուտեստեղէնով, գարդեղէնով եւ այլն:

Նախարարն ու Նահանգապետը այցելեցին ցուցահանդէսի բոլոր տաղաւարները:

Նախարարը յայտնեց, որ Սուրիոյ ներքին Առեւտուրի Նախարարութիւնը կը ջանայ զօրավիգ կանգնիլ ցուցահանդէսի մասնակիցներուն: Այս անդրադարձաւ ցուցահանդէսի կարեւորութեան, նկատի ունենալով տնտեսվարական փոքր ծրագիրները խրախուսելու նախարարութեան նախանձախնդրութիւնը, աւելցնելով, որ Սուրիոյ պետութիւնը մեծ կարեւորութիւն կու տայ այսպիսի ծրագիրներու՝ պետական տարբեր հաստատութիւններու ճամբով նման առիթներ ընձեռնելով անոնց:

Սրբազան հայրն ու իրեն ընկերակցող պատուիրակութիւնը այցելելով բոլոր տաղաւարները գնահատեցին բոլոր մասնակիցներուն թափած ճիգն ու ստեղծագործական աշխատանքը:

Թղթակից

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԳՊՐՈՅՆԵՐՈՒ ՈՒՄՈՒՅՉԱՅ ԿԱԶՄԵՐՈՒՄԻ ՄԱՍՆԱԿՅՈՒԹԻՒՆԸ «ՎԵՐԻՊԱՍ» ԱՍՏՈՒԱԾԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՕՂԱԿԻՆ

«Ամէն մէկը ինչ շնորհք որ առաւ, զանկալ իրարու մատակարարեցէ՛ք Աստուծոյ զանազան շնորհքներէն բարի տնտեսներու պէս:» (Ա Պտ 4. 10)

Օրինութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մակար Սրբազան Եպս. Ազգարեանի, հովանաւորութեամբ՝ Ճեգիրէի Առաջնորդական փոխանորդ Հոգեւ. Տ. Լեւոն Վրդ. Եղիայեանի եւ անմիջական հսկո-



ղութեամբ շրջանի հոգեւոր հովիւ Արթ. Տէր Պսակ Զիւլ. Պերպլեռեանի 2,3,4,10 եւ 11 Փետրուար 2024-ին, Ճեգիրէ շրջանի՝ Գամիշլիի Ս. Յակոբ, Հասիչի Ս. Յովհաննու Կարապետ եւ Տէրիքի Ս. Աստուածածին եկեղեցիներու Կիրակնօրեայ դպրոցներու ուսուցչաց կազմերը, մասնակցութեամբ 11 ուսուցիչ-ուսուցչուհիներու, հետեւեցան «Վերիպաս» Աստուածաբանական համալսարանի երրորդ օղակի դասընթացքին, Համազգայինի մշակութային կեդրոնէն ներս:



«Հոգեւոր Ղեկավարի Պատրաստութիւն» խորագիրը կրող սեմինարը «Վերիպաս» կազմակերպութեան Աստուածաբանական սերտողութեան համալսարանի քառամեայ ուսուցողութեան երրորդ օղակն էր, որուն հինգ օրերուն ընթացքին 60 ժամուան տեւողութեամբ դասաւանդութիւն տեղի ունեցաւ Հոմմէն ժամանած համալսարանի դասախօսներու կողմէն:

Դասընթացքին նպատակն էր մասնակիցներուն սորվեցնել Աստուածաշնչական համարները լաւապէս հասկնալու եւ վերլուծելու կողքին, զայն ճշգրիտ, հաճելի, դիւրին ձեւով եւ հաւատարմօրէն փոխանցելը, հետեւելով «բարի տնտես»-ի օրինակին:

Դասընթացքը օժտուած էր գործնական պահերով՝ աշխատանքային խմբակներու դրութեամբ:

Իր կարգին, 11 Փետրուարին Ճեգիրէի առաջնորդական փոխանորդը այցելութիւն տուաւ մասնակիցներուն՝ շնորհակալական խօսքեր ուղղելով տարուած լուրջ եւ բժախնդիր աշխատանքին համար, ապա անոր ձեռամբ կատարուեցաւ վկայականաց բաշխումը:

Յիշենք, որ քառամեայ այս ծրագիրին հետեւողը կ'արժանանայ համալսարանական վկայականի համահաւասար հաստատագրի, «Վերիպաս»-ի Աստուածաբանական սերտողութիւններու համալսարանէն:

Ռիթա Տէր Սարգիսեան-Կարապետեան